ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 3-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի Մկրտարանի ծիսակատար քահանա Տ. Խաչատուր ավագ քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայցէք ի նոյն հաւատս» (Բ Կորնթ. ԺԳ 5) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էին Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը, Տ. Դավիթ արքեպս. Սահակյանը, Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Տ. Հակոբ եպս. Գըլընճյանը և այլ միաբան Հայրեր:

Հոկտեմբերի 8-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Միտչինները, որն ավարտում է իր դիվանագիտական առաքելությունը Հայաստանում, այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ հրաժեշտ տալու Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին:

Տեղապահ Սրբազանը բարձր գնահատեց պարոն Միտչինների դիվանագիտական գործունեությունը Հայաստանում՝ գոհունակությամբ մատնանշելով երկու երկրների միջև զարգացող կապերը: Միաժամանակ Սրբազան Հայրը փաստեց, որ Հայ Առաքելական և Անգլիկան Եկեղեցիների միջև գոյություն ունեն սերտ կապեր: Հրաժեշտ տալով դեսպանին, Սրբազան Հայրը վերջինիս նորանոր հաջողություններ մաղթեց իր հետագա դիվանագիտական գործունեության մեջ:

Նույն օրը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ, տեղի ունեցավ վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Պաշտպանությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողները և բազմաթիվ հյուրեր (Տե՛ս էջ 90):

Հոկտեմբերի 9-ին, շաբաթ.- Սրբոց Թարգմանչաց վարդապետարանն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն:

Այսօր Կաթողիկոսական տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, ուղեկցությամբ Տ. Արսեն արքեպս. Բերբերյանի, Տ. Վիգեն եպս. Այքազյանի և Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի, մեկնեց հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայր՝ Դսեղ, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերաօծումը կատարելու (Տե՛ս էջ 96):

Հոկտեմբերի 10-ին, կիրակի.- Ե. կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Երանի որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատասցեն» (Հովհ. Ի 29) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը, Տ. Դավիթ արքեպս. Սահակյանը, Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Տ. Հակոբ արքեպս. Գըլընճյանը և այլ միաբան Հայրեր ու հյուրեր:

Նույն օրը, երեկոյան, Մայր Տաճարում, ձեռամբ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, տեղի ունեցավ մասնավոր վարդապետական ասպիճանի տվչություն:

Վարդապետական թեզերի հաջող պաշտպանությունից հետո վարդապետական ասպիճան շնորհվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիտասարդ միաբաններ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանին, Տ. Արտակ աբեղա Տիգրանյանին, Տ. Գուրգեն աբեղա Աղաբաբյանին և Տ. Զարեհ աբեղա Կաբաղյանին: Բոլոր Հայր Սուրբերը ստացան վարդապետական գավազան և հետայսու Սուրբ Գիրքը քարոզելու և ուսուցանելու իշխանություն:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրապատիճան հոգևորականներ, միաբան Հայրեր, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներ, հրավիրյալներ:

Հոկտեմբերի 15-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Ճեմարանի բազմավաստակ դասախոս և շնորհալի բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանի հիշատակին:

Իր խորին ցավակցությունը հայտնելով բանաստեղծի հարազատներին՝ Տեղապահ Սրբազանը մտերմիկ հուշեր պատմեց նրա մասին:

Վաչագան Հովհաննիսյանի նախկին սաները՝ Հոգևոր Ճեմարանի 4-րդ լսարանի ուսանողները, որպես հիշատակի փուրք իրենց նախկին ուսուցչին, հանդես եկան գրական-գեղարվեստական հայտագրով, նրա բանաստեղծությունների արտասանությամբ կենդանացրին ուսուցչի հիշատակը:

Հոկտեմբերի 17-ին, կիրակի.- Զ. կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Զարեհ վրդ. Կաբաղյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա և նա եղիցի մեզ ի փրկութիւն, զի Ասպուած ընդ մեզ է» (Ժամագիրք) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Շահե արքեպս. Աճեմյանը, Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը և այլ միաբան Հայրեր ու հյուրեր:

Հոկտեմբերի 19-ին, երեքշաբթի.- Սրբոցն Թ-Էոդիտրոնի քահանային, Զենոնի զինաւորին, Մակարայ, Եւդոքեայ և Ռամելայ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

Հոկտեմբերի 21-ին, հինգշաբթի.- Սրբոցն Խարիթեանցն և սրբոց վկայիցն Արքեմեայ և Քրիսպրատորի, և երկուց կանանցն Կալինիկեայ և Ակիլինեայ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հավարտ առավոտյան ժամերգության, Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ և Երուսաղեմի ու Թուրքիո հայոց Պատրիարքներ Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ընթերակայությամբ, տեղի ունեցավ հոգեհանգստյան մասնավոր պաշտոն Ամենայն Հայոց երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի նոր տեղադրված տապանաքարի առջև:

«Եւ թող այս շիրմաքարը դառնա ուխտատեղի հավատավոր հայ ժողովրդի համար»,- դիմելով բոլոր ներկաներին ասաց Տեղապահ Սրբազանը:

Սպիտակ մարմարյա տապանաքարի վրա փորագրված են հանգուցյալ Վեհափառ Հայրապետի անունը, ծննդյան ու մահվան թվականները և Վեհափառ Հայրապետի սիրած խոսքերից՝ «Մարդ է որ գործէ զերկիր»:

Արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, միաբան Հայրեր և բազմաթիվ հավատացյալներ:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ, Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ատենապետությամբ, իր աշխատանքն սկսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը:

Նիստը կշարունակվի մինչև հոկտեմբերի 22-ը, որի ընթացքում կքննարկվեն Ազգային-եկեղեցական ժողովին վերաբերող կազմակերպչական հարցեր:

Հոկտեմբերի 22-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ, Երուսաղեմի հայոց

Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ապենապետությամբ, իր աշխատանքն ավարտեց նախորդ օրն սկսված Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովը:

Երկօրյա նիստերի ընթացքում քննարկվեցին Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսի ընտրության նպատակով հոկտեմբերի 26-30-ը կայանալիք Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպման մանրամասները, հաստատվեց ժողովի օրակարգը: Քննարկվեցին նաև այլ հարցեր:

Հոկտեմբերի 24-ին, կիրակի.- Է. կիրակի զկնի Ս. Խաչի: Գ-իւր Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ արքեպս. Սահակյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազանը քարոզ խոսեց՝ «Չի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ» (Ա Կորնթ. Ա 18) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և այլ Սրբազան Հայրեր:

Հոկտեմբերի 25-ին, երկուշաբթի.- Սրբոցն Անաստասայ քահանային, և Վարոսի, և Թէոդորիտեայ և որդւոց նորա, և որք ընդ նմա կատարեցան:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ, Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ապենապետությամբ, գումարվեց Եպիսկոպոսաց Ժողովի խորհրդակցական նիստ:

Ժողովի ընթացքում լսվեցին Առաջարկությունները բանաձևող և Հայ Առաքելական Եկեղեցու կանոնադրության մշակման հանձնախմբերի տեղեկատվությունները: Քննարկվեցին նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի և Եպիսկոպոսաց Ժողովի հետագա գործունեությանը վերաբերող հարցեր, որի առիթով առաջարկվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հաստատել Եպիսկոպոսաց Ժողովի մնայուն գրասենյակ:

Քննարկվեցին նաև Եկեղեցի-պետություն հարաբերությանը վերաբերող մի շարք հարցեր: Քննարկման նյութ դարձան նաև կրթական հարցերը, որի առիթով Սրբազան Հայրերի կողմից կարևորվեց Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում կրոնագիտություն և Հայ Եկեղեցու պատմություն առարկաների ուսուցման խնդիրը:

Հոկտեմբերի 26-ին, երեքշաբթի.- Սրբոց Հիպիրիքեանցն, որք ի Սամուսատ կատարեցան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վիգեն եպս. Այքազյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Որ սիրէ զեղբայր իւր՝ ի լոյս բնակէ, և գայթագղողութիւն ի նմա չի՛ք» (Ա Հովհ. Բ 10) բնաբանով: Ս. Պատարագի ընթացքում Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները Ս. Հաղորդություն ստացան՝ ճաշակելով Քրիստոսի Մարմինն ու Արյունը:

Հավարտ Ս. Պատարագի Կաթողիկոսական Տեղապահի նախագահությամբ և Պատրիարք Սրբազան Հայրերի ընթերակայությամբ հոգեհանգստյան մասնավոր պաշտոն կատարվեց հանգուցյալ Գարեգին Ա Կաթողիկոսի շիրիմի առաջ:

Հոգեհանգստից հետո բոլոր պատգամավորները հավաքվեցին Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի նախկին շենքում՝ սիրո ճաշի:

Ժամը 14.00-ին Վեհարանի ԱԵԺ-ի նախապատրաստման գրասենյակում սկսվեց պատգամավորների հաշվառումը, որի ընթացքում արձանագրվեցին 31 երկրներից ժամանած 451 պատգամավոր:

Երեկոյան ժամը 20.00-ին Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները Ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում ներկա գտնվեցին Հարություն Թոփիկյանի ղեկավարած Երևանի կամերային երգչախմբի հոգևոր համերգին, որից հետո մասնակցեցին նաև «Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գրույցները Ջիովանի Կուայտայի հետ» գրքի շնորհանդեսին, հանդիպում ունեցան հեղինակի և թարգմանչի հետ:

Հոկտեմբերի 27-ին, չորեքշաբթի.- Դահիք:

Այսօր, առավոտյան ժամը 10.00-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում աղոթասացությամբ տեղի ունեցավ Ազգային-եկեղեցական ժողովի հանդիսավոր բացումը, որից հետո այն շարունակեց իր աշխատանքները: Երեկոյան հայտնի դարձավ ընտրյալ 132-րդ Հայրապետի՝ Գարեգին արքեպս. Ներսիսյանի անունը:

Հոկտեմբերի 28-ին, հինգշաբթի.- Սրբոցն Սահակեանոսի Մեբասրացւոյն, Բաբելայ ծերոյն և ութսուն և չորից աշակերտաց նորին:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարվեց Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստը՝ նախագահությամբ նորընտիր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Նիստի սկզբում Գարեգին Բ Կաթողիկոսը ընթերցեց ՀՀ նախագահին և համայն հայ ժողովրդին ուղղված իր ցավակցական ուղերձը:

Այս առնչությամբ Ազգային-եկեղեցական ժողովը, Գարեգին Բ Կաթողիկոսի նախագահությամբ, որոշում կայացրեց հոկտեմբերի 31-ին նախօրոք նախատեսված Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և գահակալության արարողությունները հետաձգել:

Ազգային-եկեղեցական ժողովը լիազորեց եպիսկոպոսներից և բոլոր թեմերից մեկական պատգամավորներից բաղկացած Ներկայացուցչական ժողովին՝ քննարկել և ընդունել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կանոնադրության նախագիծը:

Ազգային-եկեղեցական ժողովը փափագ հայտնեց, որ այդ աշխատանքը կավարտվի մինչև 2000 թ. հոկտեմբեր ամիսը:

Կանոնակարգային հարցի քննարկումից հետո, Ազգային-եկեղեցական ժողովը հայտարարվեց փակված:

Հոկտեմբերի 29-ին, ուրբաթ.- Դահիք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը՝ Գարեգին Բ ընտրյալ Կաթողիկոսի օծման արարողությունը գլխավորելու նպատակով:

Օդանավակայանում Արամ Ա Կաթողիկոսին դիմավորեց Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը: Կիլիկիո Կաթողիկոսին ուղեկցում էին Տ. Եփրեմ արքեպս. Թափաքյանը, Տ. Կորյուն արքեպս. Պապայանը, Տ. Խաժակ եպս. Հակոբյանը և Տ. Մուշեղ եպս. Մարտիրոսյանը:

Հասնելով Մայր Աթոռ՝ նորընտիր Գարեգին Բ և Կիլիկիո Կաթողիկոսները առաջնորդվեցին Մայր Տաճար: Բարիգալստյան խոսքերից հետո Կիլիկիո Կաթողիկոսն իր զորակցությունը հայտնեց նորընտիր Կաթողիկոսին և հայրենի պետությանը:

Հոկտեմբերի 31-ին, կիրակի.- Ը. կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տարոն արքեպս. Ճերեճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազանը քարոզ խոսեց՝ «Չիք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի, և ոչ գաղտնի՝ որ ոչ ծանիցի և եկեսցէ ի յայտ» (Ղուկ. Ը 17) բնաբանով:

Նույն օրը Ընդրյալ Ամենայն Հայոց Հայրապետը Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Հայրապետի հետ մասնակցեց հոկտեմբերի 27-ին զոհված պետական այրերի թաղման արարողությանը:

Նոյեմբերի 4-ին, հինգշաբթի.- Սրբոց հայրապետաց Մեսրոպիանոսի, Աղէքսանդրոսի և Պօղոսի խուսրովանողին և սրբոց նօրաբուաց Մարկիանոսի և Մարտիրոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց ընդրյալ Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետը: Ս. Պատարագի ընթացքում, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի նախագահությամբ, կատարվեց ընդրյալ Հայրապետի ձեռնադրության և օծման սրբազան արարողությունը: Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետին իրենց շնորհավորական խոսքերն ուղղեցին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի և Կ. Պոլսո հայոց Պատրիարքները: Շնորհավորանքներից հետո ներկաներին դիմեց Սեռոնաբույր Հայրապետը, որը խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. Զ 14) բնաբանով:

Պատարագի ավարտին հոգևորականաց թափորը Վեհափառ Հայրապետին ուղեկցեց Վեհարանի գահասրահ, որտեղ կատարվեց գահակալության արարողությունը: Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետին իր շնորհավորանքի խոսքն ուղղեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը (Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1999 թ., № Ժ-ԺԱ, էջ 22):

Այնուհետև, ժամը 16.00-ին, Մայրավանքի սեղանատանը սիրո ճաշ տրվեց, որին իրենց մասնակցությունը բերեցին նաև Հայրապետի օծման սրբազան արարողությանը ներկա քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, որոնք իրենց շնորհավորանքի խոսքերն ուղղեցին օծյալ Հայրապետին: Հավարտ ամենայնի, եզրափակիչ խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը՝ իր ջերմագին շնորհակալությունները հայտնելով քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին՝ անկեղծ ու եղբայրական զգացումների համար:

Նոյեմբերի 6-ին, շաբաթ.- Սրբոց հրեշտակապետաց Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զօրացն:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոսին շնորհավորելու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին ՀՅԴ Հայաստանյան Գերագույն Մարմնի ներկայացուցիչներ Հրանտ Մարգարյանն ու ԱԺ պատգամավոր Արմեն Ռոստոմյանը և ՀՅԴ բյուրոյի անդամ Վիգեն Հովսեփյանը՝ Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում ցավով նշվեց, որ կաթողիկոսական ընտրությունը համընկավ Ազգային ժողովում կատարված արյունալի դեպքերի հետ: Սակայն այս դժվարին օրերին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը ժողովրդի համար Վեհափառ Հայրապետը նկատեց որպես մխիթարություն:

Գարեգին Բ Կաթողիկոսն ընդգծեց, որ Հայ Եկեղեցու կարևորագույն առաքելությունը շարունակում է մնալ ժողովրդի քրիստոնեական դաստիարակությունն ու նրա հոգևոր-բարոյական նկարագրի կերտումը: Այս առնչությամբ Նորին Սրբությունն իր համոզվածությունը հայտնեց, որ Մայր Եկեղեցին մշտապես զգալու է պետության աջակցությունը: Վեհափառ Հայրապետը կարևորեց նաև քաղաքական կուսակցությունների դերը:

Զրույցի ընթացքում երկուսպեք մտահոգություն հայտնվեց նաև Հայաստանում աղանդների տարածման կապակցությամբ:

Նոյեմբերի 7-ին, կիրակի.- Թ. կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազանը քարոզ խոսեց՝ «Մի՛ երկնչիր, միայն հաւատա, և կեցցէ: ...Եւ դարձաւ ոգի նորա, և կանգնեցաւ վաղվաղակի» (Ղուկ. Ը 51, 56) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը:

Նոյեմբերի 8-ին, երկուշաբթի.- Սրբոցն՝ Մելիտոսի Անտիոքայ հայրապետին և Մինասայ եգիպտացւոյն և միւս Մելիտոսի եպիսկոպոսին, Բուրայ քահանային և Շինու սարկաւագին:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհավորելու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահության անդամները՝ նախագահ Ֆադեյ Սարգսյանի գլխավորությամբ:

Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնելով ակադեմիկոսներին, կարևորեց գիտության դերը երկրի զարգացման և ամրապնդման գործում: Իր հերթին պրն. Սարգսյանը երախտագիտությամբ հիշատակեց, որ Վեհափառ Հայրապետը, լինելով Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, բազմիցս գիտությանը ցուցաբերել է գործնական աջակցություն: Ֆ. Սարգսյանը միաժամանակ հույս հայտնեց, որ այսուհետ ևս կշարունակվեն կապերը Եկեղեցու և ակադեմիայի միջև:

Հանդիպման ընթացքում արծարծվեցին նաև կրթական խնդիրներին առնչվող հարցեր: «Եկեղեցին իրապես պատասխանատու է ժողովրդի բարոյական նկարագրի ձևավորման համար»,- կարևորելով երիտասարդ սերնդի դաստիարակության հարցը, ասաց Նորին Սրբությունը:

Զրույցի ընթացքում մտահոգություն հայտնվեց նաև հանրակրթական դպրոցներ ներթափանցած զանազան կրոնական աղանդների առնչությամբ:

Նոյեմբերի 9-ին, երեքշաբթի.- Սրբոցն Դեմետրեայ վկային և Բասիլիսկոսի քահանային:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ Սահմանադրական դատարանի անդամներին՝ դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի գլխավորությամբ:

Շնորհավորելով Վեհափառ Հայրապետին, պրն. Հարությունյանը համոզվածություն հայտնեց, որ Նորին Սրբության ընկրությամբ Հայ Առաքելական Եկեղեցին կշարունակի կատարել իր սրբազան առաքելությունը: Նա միաժամանակ հավաստեց Սահմանադրական դատարանի, որպես օրենքի մարմնի, աջակցությունը Վեհափառ Հայրապետին ու Եկեղեցուն:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրերին ներկայացրեց Հայ Եկեղեցու առջև ծառացած ներկայիս խնդիրներն ու հրամայականները: «Եկեղեցին վերադարձնել հայ տուն, հայ օջախ, հայ հոգուց ներս: Սա է մեր Եկեղեցու ներկայիս առաքելությունը»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ վստահությամբ, որ այդ առաքելության մեջ Մայր Աթոռն ունենալու է Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր նվիրապետական Աթոռների աջակցությունն ու զորակցությունը:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանին և մի խումբ դասախոսների:

Ողջ համալսարանականների անունից Վեհափառ Հայրապետի ընտրությունը ողջունելով՝ պրն. Մարտիրոսյանը փաստեց, որ համալսարանն իր հիմնադրման օրվանից կապված է եղել Ս. Էջմիածնին: Համալսարանում դասախոսել են Հայ Եկեղեցու հոգևորականներ և աջակցել համալսարանի հիմնադրմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարևորեց համալսարանի առաջնային դերը երիտասարդ սերնդի ուսման և դաստիարակման գործում՝ միաժամանակ հավաստելով, որ Հայ Եկեղեցին նախաձեռնորեն կշարունակի իր լուման բերել այս գործին:

Նոյեմբերի 14-ին, կիրակի.- Ժ. կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Որ ոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի» (Ղուկ. Թ 48) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 19-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Հունաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Պանայոտիս Զոգրաֆոսին:

Հույն դեսպանն իր շնորհավորանքն ու ուրախությունը հայտնեց Հայոց Ս. Աթոռի նոր գահակալի ընտրության առիթով: Ցավով նշելով, որ Վեհափառ Հայրապետի ընտրությունը համընկավ Հայաստանի համար ողբերգական դեպքերի հետ, պրն. Զոգրաֆոսը Հայոց Կաթողիկոսի ընտրությունը նկատեց իբրև մխիթարություն այդ դժվարին պահին:

Նորին Սրբությունը, շնորհակալություն հայտնելով բարի մաղթանքների համար, գոհունակությամբ նշեց, որ հայ ժողովուրդը խոհեմությամբ տարավ այս նոր փորձությունը, վերահաստատվեց երկրի կայունությունը, ինչին նպաստեց նաև եղբայրական պետությունների, այդ թվում՝ Հունաստանի արտացավ և բարեհոգի մոտեցումը:

Հանդիպման ընթացքում խոսվեց հայ և հույն ժողովուրդների և Եկեղեցիների դարավոր բարեկամության մասին: Վեհափառ Հայրապետը վստահամոզվածություն հայտնեց, որ երկու քրիստոնյա ժողովուրդների եղբայրական կապերը կշարունակեն էլ ավելի զարգանալ, որին իրենց նպաստը կարող են բերել նաև Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ Եկեղեցիները: Այս առիթով Վեհափառ Հայրապետը հիշատակեց Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական Պատրիարքի և երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի փոխադարձ այցելությունները:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց նաև մարդասիրական այն օգնության համար, որ տրամադրվում է Հունաստանի կառավարության

կողմից Հայաստանին և Հայոց Եկեղեցուն: Իր հերթին պրն. Զոգրաֆոսը հայտնեց Հունաստանի կառավարության պատրաստակամությունը՝ առաջիկայում ևս Հայաստանին և Մայր Աթոռին բազմաբնույթ աջակցություն ցուցաբերելու հարցում:

Հանդիպմանը ներկա էին Հունաստանի դեսպանատան ռազմական կցորդ Գեորգիոս Ռիգանակոսը և դեսպանի խորհրդական Էլենի Սորենին:

Նոյեմբերի 21-ին, կիրակի.- ԺԱ. կիրակի զկնի Ս. Խաչի: Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամաց ի Տաճարն:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: Պատարագիչ Հայր Սուրբը «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Խնդրեցէ՛ք՝ և տացի ձեզ, հայցեցէ՛ք՝ և գտջիք, բախեցէ՛ք՝ և բացցի ձեզ» (Ղուկ. ԺԱ 9) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին գահակալության առիթով շնորհավորելու, ինչպես նաև Վեհափառ Հայրապետի օրհնությունը ստանալու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նորանշանակ նախարար Հայկ Հարությունյանը:

Նորին Սրբությունն իր հերթին ևս շնորհավորեց նոր նախարարին՝ պատասխանատու պաշտոնի ստանձման առիթով, և մաղթեց նրան ամուր կամք ու օգտաշատ աշխատանք՝ հանուն հայ ժողովրդի և պետության խաղաղ ու բարօր կյանքի:

Նոյեմբերի 22-ին, երկուշաբթի.- Ա. օր Յիսնակաց Պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Ռումինիայի դեսպան Պավել Պլատոնային: Ռումինիայի դեսպանը շնորհավորեց Վեհափառ Հայրապետին գահակալության առիթով և հույս հայտնեց, որ Հայոց նորընտիր Կաթողիկոսը կշարունակի նպաստել հայ և ռումին ժողովուրդների ու Եկեղեցիների բարեկամությանն ու հեռագա մերձեցմանը:

Վեհափառ Հայրապետը վկայեց, որ ռումինահայ համայնքի դարավոր պատմության ընթացքում արդեն իսկ ձևավորվել են սերտ հարաբերություններ երկու ժողովուրդների և Եկեղեցիների միջև, որոնք առավել ջերմացան երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառի գահակալության տարիներին: Նորին Սրբությունը հավատաց, որ ինքը ևս կշարունակի աջակցել Հայ և Ռումին Եկեղեցիների ավանդական կապերի ամրապնդմանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև ռումինահայ կյանքին առնչվող տարբեր հարցերի շուրջ: Դրն. Պլատոնան նշեց, որ ռումինահայերը, երկու ժողովուրդների բարեկամության կարևորագույն գրավականը լինելուց զատ, նշանակալի դեր ունեն նաև Ռումինիայի հասարակական և մշակութային կյանքում: Նրանցից շատերը երկրի բարձրագույն իշխանություններում զբաղեցնում են պատասխանատու պաշտոններ:

Նոյեմբերի 23-ին, երեքշաբթի.- Բ. օր Յիսնակաց պահոց:

Այսօր, երեկոյան ժամը 19.00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությանն ու ուսանողությանը:

Տեսուչ Հայր Սուրբը նախ շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետի նման գեղեցիկ անակնկալի համար, ապա ներկայացրեց Ճեմարանի ընդհանուր վիճակը:

Այնուհետև իր օրհնության խոսքն ու պատգամը ներկաներին հղեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը գնահատանքի խոսքեր ուղղեց տեսչական կազմին, որից հետո ուսանողներին ներկայացրեց այսօրվա տեսչական և եկեղեցականի իր պատկերացումները՝ առաջնային համարելով հոգևորականի հավատքը:

Նոյեմբերի 24-ին, չորեքշաբթի.- Գ. օր Յիսնակաց պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի գլխավոր քարտուղար Միխայիլ Կրոտովին՝ վեհաժողովում ՀՀ ԱԺ-ի ներկայացուցիչ Ֆելիքս Ղուշչյանի և ՀՀ ԱԺ-ի արտաքին

հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանի ուղեկցությամբ:

Պրն. Կրոտովը շնորհավորեց Վեհափառ Հայրապետին գահակալության առիթով: Զրույցի ընթացքում գլխավոր քարտուղարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց կազմակերպության միջնորդական ջանքերը պարածաշրջանում, մասնավորապես Լեռնային Ղարաբաղում խաղաղության և կայունության հաստատման, ինչպես նաև պատանդների ազատ արձակման գործում:

Ողջունելով հյուրերին, Նորին Սրբությունը բարձր գնահատեց վեհաժողովի խաղաղարար առաքելությունը: Գոհունակությամբ նշելով այն դրական տեղաշարժը, որ նշմարվում է ղարաբաղյան հակամարտության լուծման գործընթացում, Վեհափառ Հայրապետը դրվատանքով մատնանշեց նաև միջխորհրդարանական կազմակերպության դերը:

Պրն. Կրոտովն իր հերթին կարևորեց Եկեղեցիների հոգևոր դերը խաղաղության ամրապնդման գործում՝ հայտնելով, որ այս ասպարեզում միջխորհրդարանական վեհաժողովը նախատեսում է կապեր հաստատել նաև ԱՊՀ երկրների Եկեղեցիների հետ: Այս առիթով Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու անունից իր պատրաստակամությունը հայտնեց մշտապես աջակցել և իր նպաստը բերել վեհաժողովի խաղաղարար աշխատանքներին:

Նույն օրը, երեկոյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ, որին միաբանները իրենց սրտի ջերմ խոսքերն ու շնորհավորանքներն ուղղեցին Վեհափառ Հայրապետին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ:

Այնուհետև Վեհափառը դիմեց միաբաններին՝ նրանց ներողամտությունը հայցելով, ընտրությունից հետո, զբաղվածության պատճառով, որոշ ժամանակ միաբանական հավաք չգումարելու համար: Որից հետո իր առաջիկա որոշ ծրագրերը ներկայացրեց միաբանների ուշադրությանը:

Նոյեմբերի 26-ին, ուրբաթ.- Ե. օր Յիսնակաց պահոց:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Չժու Չժաո Չունին:

ՉԺՀ դեսպանն իր և բազմամիլիոն չին ժողովրդի անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առիթով և մաղթեց հոգևոր վեհ առաքելություն՝ ի շահ հայ ժողովրդի խաղաղ և ապահով կյանքի:

Շնորհակալություն հայտնելով բարի մաղթանքների համար, Նորին Սրբությունը նշեց, որ հայ ժողովուրդը, նաև օտար երկրների սրտացավ վերաբերմունքի շնորհիվ, կարողանում է հաղթահարել իրեն բաժին հասած փորձություններն ու դժվարությունները:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու պրն. Չժու Չժաո Չունն անդրադարձան հայ-չինական դարավոր կապերին ու բարեկամությանը: Նշվեց, որ Խարբինում առ այսօր կանգուն է հայկական մի եկեղեցի՝ մեկը Չինաստանում գոյություն ունեցած հայկական եկեղեցիներից: Հայ-չինական կապերի և չինահայ համայնքի մասին մի շարք վկայություններ կան նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարաններում: Վեհափառ Հայրապետը հպարտությամբ հայտնեց, որ Ասպվածաշնչի չինարեն առաջին թարգմանությունը նույնպես պատկանում է չինապրանաբնակ մի հայի:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը համոզմունք հայտնեց, որ երկու երկրների միջև հաստատված ներկայիս դիվանագիտական ջերմ հարաբերությունները նոր շունչ են հաղորդում հայ-չինական դարավոր կապերին:

Նոյեմբերի 27-ին, շաբաթ.- Սրբոցն Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի Հայրապետին և Միւռոնայ եպիսկոպոսին:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր անդրանիկ ուխտագնացությունը կատարեց Օշական՝ հայոց առաջին ուսուցիչ Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմին (Տե՛ս էջ 3):

Նոյեմբերի 28-ին, կիրակի.- Ա. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ, և այն յաւելցի ձեզ» (Ղուկ. ԺԲ 31) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 30-ին, երեքշաբթի.- Սրբոցն Ղունկիանոսի քահանայի, Տարագրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի, Ոնեսիմեայ և այլոց աշակերտացն Սրբոյն Պողոսի:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր խորհրդի նիստ, որի ընթացքում Նորին Սրբությունը հրապարակեց հայրապետական տնօրինությունները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմերում և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարված փոփոխությունների և նոր նշանակումների մասին (Տե՛ս էջ 18):

Դեկտեմբերի 1-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բաքրի Ռուշդի Էլ Ամմարիին:

Նորանշանակ դեսպանը շնորհավորեց Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առիթով՝ ուրախությամբ նշելով, որ Ղպտի Եկեղեցու ներկայացուցիչների հետ մեկտեղ ներկա է եղել Նորին Սրբության օծման և գահակալության արարողությանը: Եգիպտոսի դեսպանը միաժամանակ իր ցավակցությունը հայտնեց հոկտեմբերի 27-ի ողբերգական դեպքերի առիթով՝ հայտնելով, որ Եգիպտոսի ժողովուրդն անկեղծորեն կիսում է հայ ժողովրդի ցավը:

Նորին Սրբությունը, բարեմաղթանքների համար շնորհակալություն հայտնելով, իր հերթին շնորհավորեց նոր դեսպանին՝ Հայաստանում դիվանագիտական աշխատանքի անցնելու կապակցությամբ: Վեհափառ

Հայրապետը հույս հայտնեց, որ դեսպանն իր օգտաշատ աշխատանքով կնպաստի երկու երկրների դարավոր կապերի առավել զորացմանը, ուր իրենց դրական դերն ունեն նաև Եգիպտոսի հայ համայնքն ու Հայոց Եկեղեցին:

Նույն օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսին ընտրության և գահակալության առիթով շնորհավորելու և Վեհափառ Հայրապետի օրհնությունը ստանալու նպատակով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նորանշանակ նախարար Կառլոս Պետրոսյանը:

Նորին Սրբությունն իր հերթին ևս շնորհավորեց նոր նախարարին՝ պատասխանատու պաշտոնի ստանձման առիթով, և մաղթեց նրան արդյունավետ ու ազգօգուտ աշխատանք: Հայրապետական օրհնությունը տալով նրն. Կառլոս Պետրոսյանին, Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նոր նախարարն իր հայրենանվեր աշխատանքով կնպաստի երկրի կայունության և անվտանգության պահպանմանն ու զորացմանը:

Դեկտեմբերի 3-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայաստանի ու Արցախի թեմակալ առաջնորդների և ՀՀ տարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյանի գլխավորությամբ Մայր Աթոռ այցելած Հայաստանի մարզպետների հանդիպում (Տե՛ս էջ 12):

Դեկտեմբերի 4-ին, շաբաթ.- Տօն Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, ի հիշատակ հայոց առաջին լուսավորիչ առաքյալների, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Զարեհ վրդ. Կաբաղյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Ո՞վ է մարդ՝ որ գիտիցէ զխորհուրդս Աստուծոյ, կամ ո՞վ ածիցէ զմտաւ՝ թէ զինչ կամիցի Տէր» (Իմաստ. Սող. Թ 13) բնաբանով:

Որպես քարոզչության խորհրդի ոգեկոչում, արդեն հինգերորդ տարին է, ինչ երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի հատուկ պատգամով այս երկու Ս. Առաքյալների տոնը հռչակված է նաև քրիստոնեական դաստիարակության օր (Տե՛ս էջ 104):

Դեկտեմբերի 5-ին, կիրակի.- Բ. կիրակի Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազանը քարոզ խոսեց՝ «Քանզի ոչ կոչեաց զմեզ Աստուած ի պղծութիւն՝ այլ ի սրբութիւն» (Ա Թես. Դ 7) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 7-ին, երեքշաբթի.- Սրբոց հարցն եգիպտացւոց՝ Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գրնեցւոյն, Յովհաննու Կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Միսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի և այլոց սրբոց հարցն:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իբրև հարգանքի տուրք, իր անդրանիկ այցը կատարեց Սպիտակ և Գյումրի՝ 1988 թ. աղետալի երկրաշարժի հազարավոր զոհերի հիշատակին:

Վերադարձին Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Մուղնու Ս. Գևորգ եկեղեցի, ծանոթացավ վերանորոգման աշխատանքներին:

Դեկտեմբերի 8-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոն՝ իր շնորհավորանքները հայտնելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների համար՝ Վեհափառ Հայրապետն իր հերթին շնորհավորեց Ուկրաինայի դեսպանին՝ երկրի նախագահի վերընտրության առիթով:

Հանդիպման ընթացքում խոսվեց հայ-ուկրաինական դարավոր կապերի, Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների պատմական առնչությունների մասին: Դրն. Բոժկոն նշեց, որ Հայ Առաքելական Եկեղեցու

արմատներն Ուկրաինայում ձգվում են մինչև Կիևյան Ռուսիա և առավել վաղ ժամանակներ, իսկ ուկրաինացի ժողովուրդը մշտապես սիրով է վերաբերվել հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նկատեց, որ երկու երկրների բարեկամությունն այսօր ևս շարունակում է ամրանալ, որում մեծ է ավանդը հայ ժողովրդի լավ բարեկամ պրն. Բոժկոյի և Հայաստանում Ուկրաինայի դեսպանատան:

Դեկտեմբերի 11-ին, շաբաթ.- Սրբոյն Նիկողայոսի Զմիռնացւոյ Սքանչելագործ Հայրապետին:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Հանրապետության նախագահը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր ափսոսանքը հայտնեց՝ ողբերգական դեպքերի պատճառով փոքր-ինչ ուշացած այցի համար (Տե՛ս էջ 9):

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իռլանդիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Դեյվիդ Դոնահյուին:

Ողջունելով դեսպանի անդրանիկ այցը հայոց հոգևոր կենտրոն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Վեհափառ Հայրապետը շնորհավորեց հյուրին դեսպան նշանակվելու առիթով և հույս հայտնեց, որ երկու երկրների միջև կզարգանան ջերմ փոխհարաբերություններ:

Պրն. Դոնահյուն նշեց, որ միմյանցից անչափ հեռու գտնվող երկու երկրներն ունեն մի շարք ընդհանրություններ: Համաձայնելով դեսպանի հետ, Վեհափառ Հայրապետն իր ջերմ զգացմունքներն ու հարգանքն արտահայտեց Իռլանդիայի արի ու ստեղծագործ ժողովրդի հանդեպ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը, դեսպանի խնդրանքով, համառոտ ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմությունը, անդրադարձավ Հայ Առաքելական Եկեղեցու թեմական կառուցվածքին:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ

Մինսկի խմբի ամերիկյան պատվիրակությանը՝ խմբի համանախագահ Քերի Քևինոյի գլխավորությամբ: Պատվիրակությանն ուղեկցում էր Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով ամերիկյան ներկայացուցիչների այցը հայոց հավատքի նվիրական կենտրոն, բարձր գնահատեց Մինսկի խմբի միջնորդական ջանքերը՝ ուղղված տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանը:

Դրն. Քևինոն հավաստիացրեց, որ, չնայած առկա դժվարություններին, տարածաշրջանային խնդիրները կլուծվեն միայն խաղաղ բանակցությունների սեղանի շուրջ:

Օգտվելով պատեհ առիթից՝ Վեհափառ Հայրապետը ողջունեց նաև ԱՄՆ դեսպանի այցը Մայր Աթոռ և իր գնահատանքը հայտնեց Հայաստանի նկատմամբ ԱՄՆ իշխանությունների և մասնավորապես դեսպանի ունեցած ազնիվ վերաբերմունքի համար:

Դեկտեմբերի 12-ին, կիրակի.- Գ. կիրակի Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: Պատարագիչ Հայր Սուրբը «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Արա այսր մտանել» (Ղուկ. ԺԴ 23) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 13-ին, երկուշաբթի.- Պահք: Սրբոցն Մինասայ, Երմոգինեայ, Գրիգորի և կամաւոր աղքատացն՝ Յովհաննու և Ալէքսանդրի:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց դարաբաղյան հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի պատվիրակությանը՝ համանախագահներ Նիկոլայ Գրիբկովի և Ժան Ժակ Գայարդի գլխավորությամբ:

Մինչ Հայաստանից մեկնելը պատվիրակությունը եկել էր Մայր Աթոռ՝ իր համակրանքն ու հարգանքն արտահայտելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ, ինչպես նաև ցավակցելու հոկտեմբերյան ողբերգական դեպքերի առիթով:

Հյուրերին ողջունելով՝ Վեհափառ Հայրապետը հանուն Հայ Առաքելական Եկեղեցու իր գնահատանքը հայտնեց Մինսկի խմբի ներկայացուցիչներին, որոնք նախաձախնդրորեն շարունակում են հետամուտ լինել ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորմանը:

Անդրադառնալով ողբերգական հայտնի դեպքերին, Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ հայ ժողովրդին հաջողվեց շրջանցել երկրի կայունությանն ու խաղաղությանը սպառնացող վտանգը, ինչը կարելի է նկատել իբրև վկայություն այն բանի, որ Հայաստանում ձևավորված են քաղաքական ու պետական իրապես գործող և առողջ կառույցներ:

«Սա հույս է ներշնչում, որ միջնորդ պետությունների հետ համատեղ կգտնվեն նաև խաղաղ ճանապարհներ ղարաբաղյան հարցի լուծման համար»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ ունեցավ Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դեսպանների հետ:

Վեհափառ Հայրապետին, ընտրության և գահակալության առիթով անձամբ շնորհավորելու համար, առավոտյան Մայր Աթոռ այցելեց Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար, դեսպանորդ դոկտոր Համեդ Հասանը: Ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում Եկեղեցու դերը կարևորելով՝ դեսպանը հույս հայտնեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր առաքելությամբ կնպաստի երկու երկրների ժողովուրդների կապերի առավել սերտացմանը:

«Աղոթում ենք, որպեսզի Տերը զորացնի սերը պետությունների և ազգությունների միջև, որպեսզի 3-րդ հազարամյակը մարդկության կյանքում դառնա խաղաղության, բարեկամության և առաջընթացի հազարամյակ»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին իր անդրանիկ այցը կատարեց Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Թ.Իմոթի Էյդան Ջոնսը: Ընդունելով դեսպանի շնորհավորանքները Ամենայն Հայոց

Կաթողիկոսի ընտրության առիթով, Վեհափառ Հայրապետն իր հերթին բարեմաղթանքներ հայտնեց նորանշանակ դեսպանին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ երկու երկրների միջև ստեղծվել են սերտ հարաբերություններ: Անդրադառնալով Հայ Առաքելական ու Անգլիկան Եկեղեցիների եղբայրական կապերին, Վեհափառ Հայրապետը հայտնեց, որ այսօր էլ բազմաթիվ հայ հոգևորականներ իրենց ասպվածաբանական գիտելիքներն են հարստացնում Անգլիայի համալսարաններում:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց նաև Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլոզ Նիկոլոզիշվիլին:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու հարևան քրիստոնյա ժողովուրդների և Եկեղեցիների դարավոր բարեկամության մասին:

Դեկտեմբերի 14-ին, երեքշաբթի.- Պահք: Սրբոցն Կոստանդինոսի հարիւրապետին և Շնաւօնի ազգականին Քրիստոսի՝ որ խաչեցաւ յԵրուսաղէմ, Պողիկարպոսի հայրապետին Զմիւռնիոյ և սրբոց վկայիցն, որք յարևելս կատարեցան:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ ունեցավ Հայաստանում Գերմանիայի և Լիբանանի արտակարգ և լիազոր դեսպաններ Ֆոլկեր Զայթցի և Թոնի Բադաուիի հետ:

Ընդունելով դեսպանների շնորհավորանքները Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առիթով, Վեհափառ Հայրապետը փոխադարձաբար շնորհավորեց նրանց՝ Հայաստանում դիվանագիտական աշխատանքի անցնելու կապակցությամբ:

Պրն. Զայթցի հետ ունեցած հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ նորանշանակ դեսպանը կնպաստի հայ-գերմանական կապերի, ինչպես նաև երկու Եկեղեցիների հարաբերությունների առավել սերտացմանը՝ դրանք դարձնելով առավել արդյունաբեր:

Վեհափառ Հայրապետը ջերմությամբ վերհիշեց 17 տարիներ առաջ Գերմանիայում՝ Բոննի համալսարանում իր ուսումնառության և հայ համայնքում հոգևոր սպասավորության տարիները:

Հանդիպելով Լիբանանի արտակարգ և լիազոր դեսպան Թոնի Բաղաուիի հետ, Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց այն ջերմ վերաբերմունքի համար, որ մշտապես դրսևորում են լիբանանյան իշխանությունները՝ Լիբանանում իրենց երկրորդ հայրենիքը վերագտած հազարավոր հայերի հանդեպ: Գոհունակությամբ նշելով նաև հայ-լիբանանյան ջերմ կապերը՝ երկուսդեք կարևորվեց լիբանանահայ համայնքի, ինչպես նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դերը այդ կապերի սերտացման գործում:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում հրեական համայնքի հոգևոր առաջնորդին՝ ռաբբի Գերշ. Մեյեր Բուշտեյնին:

Վեհափառ Հայրապետի ընտրությունը շնորհավորելով՝ հրեական համայնքի առաջնորդը Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց ներհամայնքային կյանքը:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ տարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյանի մասնակցությամբ, տեղի ունեցավ Հայաստանի թեմական առաջնորդների և Հայաստանի մարզպետների երկրորդ հանդիպումը (Տե՛ս էջ 13):

Դեկտեմբերի 15-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի եզդիների հոգևոր խորհրդի նախագահ Հասան Հասանյանին և եզդիների «Էզիդիխանա» հասարակական-քաղաքական կազմակերպության պատվիրակությանը:

Արտահայտելով իրենց խորը ակնածանքը Հայ Առաքելական Եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ, հյուրերը գոհունակությամբ նշեցին, որ Հայաստանն այն երկրներից է, որտեղ չեն ոտնահարվում եզդիների կրոնական զգացմունքները, և նրանք շարունակում են պահպանել իրենց հավատքը:

Դեկտեմբերի 18-ին, շաբաթ.- Սրբոցն Յակոբայ Մծբնայ Հայրապետին, Մարուգէի ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին:

Այսօր, երեկոյան ժամերգության ընթացքում, Իջման Ս. Սեղանի առջև հանդիսավոր կերպով երդումնագրեր ընթերցեցին և, ի հավատարմություն իրենց եպիսկոպոսական ուխտին և Ամենայն Հայոց Կաթողիկոսության՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, այն ստորագրեցին հաջորդ օրը եպիսկոպոս ձեռնադրվող ընծայացուները՝ Երուսաղեմի լուսարարապետ Տ. Նուրիան ծ. վրդ. Մանուկյանը և Կ. Պոլսի Կրոնական ժողովի ատենապետ Տ. Արամ ծ. վրդ. Աթեշյանը:

Դեկտեմբերի 19-ին, կիրակի.- Դ. կիրակի Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հընթացս Պատարագի Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեհաճ տնօրինությամբ տեղի ունեցավ Տ. Նուրիան ծ. վրդ. Մանուկյանի և Տ. Արամ ծ. վրդ. Աթեշյանի եպիսկոպոսական ձեռնադրությունը:

Եկեղեցական արարողություններից հետո, ի պատիվ նորընծա եպիսկոպոսների, Մայր Աթոռի միաբանական սեղանատանը ընդունելություն տեղի ունեցավ: Վեհափառ Հայրապետը նորաօծ եպիսկոպոսներին հանձնեց եպիսկոպոսական պանակներ, որ իբրև եպիսկոպոսական ասպիճանի խորհրդանիշ իրենց կրծքին են կրելու:

Դեկտեմբերի 20-ին, երկուշաբթի.- Սրբոց հայրապետաց Իգնատիոսի, Աղդէի և Մարութայի և Թէոպոմպայ եպիսկոպոսաց, և Թէոկնայ վկային, և չորից զինուորաց՝ Բասոսի, Եւաերի, Եւտիգի և Բասիլիդեայ:

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց նորոգ ձեռնադրյալ Տ. Արամ եպս. Աթեշյանը:

Դեկտեմբերի 21-ին, երեքշաբթի.- Սրբոյն Աբգարու նախավկայ և ի Քրիստոս անդրանիկ հաւատացեալ թագաւորին մերոյ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Ազգությունների միության ներկայացուցիչներին՝ միության նախագահ Վլադիմիր Զապոնի գլխավորությամբ:

Վեհափառ Հայրապետին ներկայացնելով միության անդամ 12 ազգային-հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, պրն. Զապոնը նշեց, որ Հայաստանն իրենց համար վաղուց դարձել է հայրենիք, իսկ Ս. Էջմիածինը՝ հարազատ տուն:

«Տարբեր ազգությունների ներկայությունը մեր երկրում մեծ հարստություն է», - նկատեց Վեհափառ Հայրապետը՝ նշելով, որ հայաստանաբնակ ռուս, հույն, ասորի և մյուս բոլոր ազգերը ոչ միայն բերում են իրենց ազգային մշակույթն ու սովորությունները, այլև դառնում են հաստատուն կամուրջ ժողովուրդների և երկրների բարեկամության համար:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց Հայաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին և իր բարեմաղթանքը գրանցեց միության հուշամատյանում:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մեկօրյա այցով Հայաստան ժամանած ԱՊՀ գործադիր քարտուղար Յուրի Յարովին՝ ԱՊՀ-ում Հայաստանի ներկայացուցիչ Սուրեն Հարությունյանի և այլ պատվիրակների ուղեկցությամբ:

Զրույցի ընթացքում պրն. Յարովը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ԱՊՀ կարևորագույն խնդիրները՝ ուղղված ԱՊՀ երկրների միջև տնտեսական կապերի վերականգնմանն ու խաղաղության և միասնական ոգու վերականգնմանը:

Հրաժեշտ տալով մեծարգո հյուրին, Վեհափառ Հայրապետն ուժ և կարողություն մաղթեց նրան իր բարի և կարևոր առաքելության մեջ:

Դեկտեմբերի 22-ին, չորեքշաբթի.- Պահք:

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ: Վեհափառ Հայրապետի վարչության պատճառով այն նախագահեց Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը: Հավաքին խոսվեց ծխական քահանաների առաքելության, ինչպես նաև Ամերիկայի ու Հայաստանի թեմերում հոգևոր հովիվների կատարած գործունեության մասին: Այնուհետև հարց ու պատասխանի փոխանակություն տեղի ունեցավ միաբանների և Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանի միջև:

Դեկտեմբերի 23-ին, հինգշաբթի.- Սրբոցն Դաւթի մարգարէին և Յակոբայ Տեառնեղբայր առաքելոյն:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Սպիտակի Ս. Հարություն նորակառույց եկեղեցու օծումը: Օծման արարողությանը ներկա գտնվելու նպատակով Սպիտակ էր ժամանել նաև Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը (Տե՛ս էջ 97):

Դեկտեմբերի 25-ին, շաբաթ.- Սրբոյն Ստեփաննոսի նախատակային և առաջին մարտիրոսին:

Այսօր Մայր Տաճարում, նախավկա սարկավագի հիշատակը ոգեկոչելով, Ս. Ստեփաննոսի Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը՝ «Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւնն» (Ղուկ. ԺԹ 12) բնաբանով:

Դեկտեմբերի 26-ին, կիրակի.- Ե. կիրակի Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Անուշավան աբեղա Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի» (Ղուկ. ԺԸ 14) բնաբանով:

Նույն օրը, Ս. Պատարագին մասնակցելու և Արարատյան Հայրապետական թեմի նորանշանակ Առաջնորդական փոխանորդին ներկայացնելու նպատակով, Երևանի Ս. Սարգիս եկեղեցի այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Դեկտեմբերի 27-ին, երկուշաբթի.- Սրբոց առաքելոցն Պետրոսի և Պողոսի:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանն այցելեցին Եղեգնաձոր, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ բացվեց ուսուցիչների վերապատրաստման Վայոց Ձորի կենտրոնը:

Կենտրոնի հանդիսավոր բացմանը ներկա էին ՀՀ տարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյանը, կրթության և գիտության նախարար Էդուարդ Ղազարյանը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմական առաջնորդներ:

Դեկտեմբերի 31-ին, ուրբաթ.- Բ. օր Ծննդեան պահոց:

Այսօր, երեկոյան ժամը 20.00-ին, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նախկին շենքում տեղի ունեցավ ամավերջյան հանդիսություն:

Կեսգիշերից հետո, ժամը 00.30-ին, Մայր Տաճարում Հանրապետական Մաղթանք կատարվեց՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի նախագահությամբ: Մաղթանքին ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, միաբան Հայրեր և բազում հավատացյալ հայորդիներ: